DocuSign Envelope ID: CB092E5E-C098-4052-9960-00F60898930D

Գլենդելի հանրային կարգադրություն թիվ 2020-06

Գլենդելի Արտակարգ իրավիճակների

ծառայության լիազորության ներքո

Հրապարակման ամսաթիվը՝ 8 ապրիլի, 2020 թ.

COVID-19-ի դեմ ուղղված քաղաքապետարանի միջոցառումները (բնակելի տարածքներից վտարումների մասին)

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին N-28-20 գործադիր հրամանով նահանգապետը կասեցրել է նահանգային օրենսդրության ցանկացած դրույթ, որը տեղական արտակարգ իրավիճակների ժամանակ կխոչընդոտի տեղական իշխանությունների քաղաքականության իրավասության իրականացմանը՝ էական սահմանափակումներ կիրառելով բնակելի կամ առևտրային նշանակության տարածքներից բնակիչների վտարմանը, եթե վտարման հիմքը COVID-19 համավարակի հանգամանքների պատճառով վարձավճարը չվճարելն է կամ

DocuSign Envelope ID: CB092E5E-C098-4052-9960-00F60898930D

գրավադրված գույքի իրավունքից զրկելը: Խիստ կարևոր է, որ մարդիկ ունենան ապաստարանի և հոսող ջրի հնարավորություն՝ առավելագույնի հասցնելով հանրային առողջապահական հրահանգներին համապատասխանելու մեր բնակիչների ունակությունը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 18-ին Գլենդել քաղաքի մենեջերը, հանդես գալով Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի դերում, հրապարակեց Գլենդելի թիվ 200-03 արտակարգ հրամանը՝ վտարման ժամանակավոր արգելք դնելով ինչպես բնակելի, այնպես էլ առևտրային նշանակության տարածքների վարձակալների նկատմամբ՝ վարձավճարները չվճարելու համար: Այս հրամանը վավերացվեց Քաղաքային խորհրդի կողմից 2020 թ. մարտի 24-ին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 27-ին N-37-20 գործադիր հրամանով Նահանգապետն ընդունեց լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ բնակելի տարածքների վարձակալների համար, որով թույլ է տրվում COVID-19-ի հանգամանքներից ելնելով՝ իրականացնել վարձավճարների վճարման հետաձգում, և տրվում է լրացուցիչ ժամանակ՝ անօրինական վարձակալի հայցադիմումին պատասխանելու համար; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 6-ին Կալիֆորնիայի դատական խորհուրդն ընդունեց Արտակարգ իրավիճակների կանոնները, որոնք ղեկավարում են անօրինական վարձակալի հայցադիմումի գործընթացը;

Հետևաբար, այժմ՝ ըստ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի տրված լիազորության՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը արձակում է հետևյալ հրամանները, որոնք գործում են այսօր երեկոյան ժամը 11:59-ից մինչև 2020 թվականի մայիսի 31-ը ժամը 12:00-ը, ըստ որի՝

Բաժին 1. Գլենդել քաղաքի Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի թիվ 2020-03 հանրային կարգադրությունը փոփոխվում և ընդլայնվում է, և պետք է համապատասխանի 2020 թ. մարտի 27-ի թիվ N-37-20 Գործադիր հրամանին (որը վերաբերում է բնակելի տարածքներից վտարումներին) և 2020 թ. ապրիլի 6-ի Կալիֆորնիայի դատական խորհրդի Արտակարգ իրավիճակների 1-ին կանոնին (որը վերաբերում է անօրինական վարձակալների հայցերին), որոնք նախատեսում են հետևյալը՝

a. Կալիֆորնիայի նահանգապետի կողմից վտարման մասին հրապարակված գործադիր հրամանի վերաբերյալ՝

1. Գործադիր հրամանի ուժի մեջ գտնվելու ընթացքում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1167-րդ բաժնում նշված ժամկետը երկարաձգվում է 60-օրյա ժամկետով՝ վարձակալների դեմ այնպիսի բողոքների համար, որոնք պահանջում են վարձակալներին վտարել բնակելի տներից կամ հարակից բնակելի միավորներից՝ վարձավճարը չվճարելու պատճառով;

2. COVID-19-ի հետևանքով վարձավճարն ամբողջությամբ վճարել չկարողանալու դեպքում՝ վարձակալը պետք է վարձավճարի ամբողջական կամ մասամբ վճարման հետաձգման մասին գրավոր ծանուցում ուղարկի տանտիրոջը, նախքան վարձավճարի վճարման օրը, կամ դրանից հետո՝ ողջամիտ ժամկետում՝ ոչ ավել, քան 7 օրվա ընթացքում;

DocuSign Envelope ID: CB092E5E-C098-4052-9960-00F60898930D

3. Վարձակալը պետք է պահպանի հավաստի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ աշխատանքի դադարեցման մասին ծանուցումները, աշխատավարձի ստացականները, անդորրագերը, բանկային քաղվածքները, բժշկական հաշիվները կամ գործատուի կամ վերահսկողի ստորագրված նամակները կամ հաստատումները, որոնք բացատրում են վարձակալի ֆինանսական հանգամանքների փոփոխությունը՝ աջակցելով վարձակալի վճարել չկարողանալու մասին պնդմանը: Այս փաստաթղթերը կարող են տրամադրվել տանտիրոջը ոչ ուշ, քան ժամկետանց վարձավճարը վճարելու ժամանակ:

b. Ինչ վերաբերում է վտարման մասին Կալիֆորնիայի դատական խորհրդի կողմից հրապարակված Արտակարգ հրամանին՝

1. Անօրինական վարձակալի դեմ ոչ մի բողոք չի կարող ներկայացվել, եթե դատարանի հայեցողությամբ և գրառման մեջ նշված չէ, որ գործողությունն անհրաժեշտ է հանրային առողջությունը և անվտանգությունը պաշտպանելու համար:

2. Այս կանոնն ուժի մեջ կմնա Նահանգապետի կողմից COVID-19 համավարակի հետ կապված արտակարգ դրությունը վերացնելու մասին հայտարարությունից հետո 90 օրվա ընթացքում, կամ՝ մինչև Դատական խորհրդի կողմից այն փոփոխելը կամ չեղյալ հայտարարելը:

Բաժին 2. Սույն կարգադրությամբ նախատեսված ոչինչ չի կարող խոչընդոտել այն վարձակալին, որն ի վիճակի է վճարել վարձավճարն ամբողջությամբ կամ մասամբ, ժամանակին վճարել այդ վարձավճարը, կամ ոչինչ չի կարող ազատել վարձակալին՝ չվճարված վարձավճարների համար պատասխանատվությունից: Այս հանրային կարգադրությունը փոփոխում է նախկին կարգադրությունը և վարձակալների համար երկարաձգում է ժամկետանց վարձավճարի վճարման ժամկետը՝ տեղական արտակարգ դրության ավարտից հետո տասներկու ամիս ժամանակով:

Բաժին 3. Վարձակալները կարող են օգտագործել սույն ենթաբաժնում ներկայացվող պաշտպանական դրույթները՝ որպես հաստատող պաշտպանություն՝ անօրինական վարձակալի դեմ հայցի գործողությունում:

Բաժին 4. Տանտերերին արգելվում է գանձել կամ պահանջել ուշացած վճարման տուգանքներ, վճարներ կամ չվճարված վարձավճարների տոկոսներ կամ փորձել որևէ հետապնդող գործողություն իրականացնել հետաձգված վարձավճարները ստանալու համար, եթե վարձակալության վճարումը հետաձգվել է այս Հանրային կարգադրության գործողության ժամանակահատվածում:

Բաժին 5. Վերոնշյալ Հանրային կարգադրության ցանկացած խախտման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր անհատ պաշտոնյա պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս կարգադրության կատարման շրջանակներում, և մշտապես մտապահի կարգադրության նպատակը: Խախտումները կարող են

DocuSign Envelope ID: CB092E5E-C098-4052-9960-00F60898930D

իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

Բաժին 6. Սույն կարգադրությունը կարող է երկարաձգվել, նախքան 2020 թ. մայիսի 31-ը:

8 ապրիլի, 2020 թ.

Ժամը՝ 5:27 P.M.

Ում կողմից՝ _____
Յասմին Ք. Բիրս
Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրեն

Հաստատված է՝
Մայքլ Ջ. Գարսիա՝ Քաղաքի դատախազ

Ում կողմից՝ Michael J. Garcia

Պաշտոնը՝ Քաղաքի դատախազ

Ամսաթիվ՝ 8 ապրիլի, 2020 թ.